



ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



Ինֆորմացիոն Կենտրոն



Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Արմքոմեդի» մշակութային հասարակական կազմակերպություն

ԱՐՄԲՈՄԵԴԻ մշակութային հասարակական կազմակերպություն

«Հակակոռուպցիոն ռազմավարության երգիծական վերահսկում» ծրագրի հաշվետվություն

«Հակակոռուպցիոն ռազմավարության երգիծական վերահսկում» ծրագիրը իրականացրել է «Արմքոմեդի» մշակութային հասարակական կազմակերպությունը՝ «Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 900,000 ՀՀ դրամ: Ծրագրի տևողությունն էր՝ 2015թ. մայիսի 1-ից մինչև 2015թ. հուլիսի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

*ԱՐՄԲՈՄԵԴԻ մշակութային հասարակական կազմակերպության ծրագրային
հաշվետվություն*

«Հակակոռուպցիոն ռազմավարության երգիծական վերահսկում» ծրագրի վերաբերյալ

«Արմքոմեդի» մշակութային հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ Արմքոմեդի/ 2015թ. Մայիսի 1-ից հուլիսի 31-ը իրականացրել է «Հակակոռուպցիոն ռազմավարության երգիծական վերահսկում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է երգիծական հոդվածների շարք ուղղված հակակոռուպցիոն գործողությունների խթանման և վերահսկման համար:

Նշված ժամանակահատվածում Արմքոմեդին իր կայքում /www.armcomedy.com/ հրապարակել է ծրագրով նախատեսված 20 հոդված, որոնց հղումները ներկայացնում ենք ստորև.

1. <http://www.armcomedy.com/2015/05/07/anticorruption/>
2. <http://www.armcomedy.com/2015/07/22/4s-is-back/>
3. <http://www.armcomedy.com/2015/07/17/erebuni/>
4. <http://www.armcomedy.com/2015/07/10/corruption-10/>
5. <http://www.armcomedy.com/2015/07/10/divorce/>
6. <http://www.armcomedy.com/2015/07/08/corruption-9/>
7. <http://www.armcomedy.com/2015/06/28/corruption-8/>
8. <http://www.armcomedy.com/2015/06/21/saakashvili-2/>
9. <http://www.armcomedy.com/2015/06/20/corruption-7/>
10. <http://www.armcomedy.com/2015/06/16/corruption-6/>
11. <http://www.armcomedy.com/2015/06/13/qyassibfm/>
12. <http://www.armcomedy.com/2015/06/06/corruption-5/>
13. <http://www.armcomedy.com/2015/06/05/fifa/>
14. <http://www.armcomedy.com/2015/05/31/rise/>
15. <http://www.armcomedy.com/2015/05/31/penis/>
16. http://www.armcomedy.com/2015/05/26/corruption_problems/
17. <http://www.armcomedy.com/2015/05/23/artashat/>
18. <http://www.armcomedy.com/2015/05/22/corruption-4/>
19. <http://www.armcomedy.com/2015/05/13/corruption-3/>
20. <http://www.armcomedy.com/2015/05/12/karmir/>

Ծրագրի շրջանակներում համակողմանի ուսումնասիրություն է իրականացվել Հակակոռուպցիոն պետական մարմնի աշխատանքին, ինչպես նաև հարակից մարմինների գործունեությանը այս ոլորտում: Այս առումով վերլուծվել են առանցքային միջոցառումները և որոշումները, որոնք կատարվել են՝ ա. Կոռուպցիայի դեմ պայքարի

խորհրդի, բ. Բարձրաստիճան պաշտոնյաների Էթիկայի հանձնաժողովի, գ. Արդարադատության նախարարության և Խորհրդի այլ անդամների կողմից:

Վերահսկողության մեջ կարևոր դեր են խաղացել լրագրողական հետաքննություններն ու վերլուծությունները, որոնք իրականացվում և ներկայացվում էին www.iravaban.net կայքի [կողմից](#): Բացի դրանից Արմքոմեդին հետևում էր կառավարության պաշտոնական [կայքին](#) և Էթիկայի [հանձնաժողովին](#):

Մասնավորապես, ի հայտ են բերվել այնպիսի դեպքեր, որտոնք բացասաբար են ազդել կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերին, ինչպիսիք են՝ Հակակոռուպցիոն խորհրդում ՀԿ-ների միայն սիմվոլիկ [ներգրավումը](#); կառավարության կողմից բյուջեի միջոցների [կասկածելի](#) ծախսերը; առավել արդիական զարգացող դեպքեր կապված էլեկտրաէներգիայի հետ՝ [1](#), [2](#) և Բարձրաստիճան պաշտոնյաների կասկածելի [եկամուտների](#) հարցը, որը զարմանալիորեն կասկած չի առաջացրել Էթիկայի [հանձնաժողովի](#) մոտ:

Ծրագրի հոդվածները տարածվել են ինչպես կայքի, այնպես էլ ֆեյսբուքյան էջի միջոցով <https://www.facebook.com/armcomedy>:

Ծրագրի ընթացքում կայքը այցելել է ավելի քան 130 հազար մարդ և բոլոր հոդվածները լայնորեն տարածվել են սոցիալական ցանցերով:

Բացի նշված ցուցանիշներից Արմքոմեդին օգտագործել է ծրագրի նյութերը հեռուստատեսային հաղորդման շրջանակներում: Նշենք, որ Արմքոմեդին հեռարձակվում է նաև [ATV](#) հեռուստաընկերությամբ և հասնդիսանում է Հայաստանի միակ քաղաքական երգիծանքի հաղորդումը: Արմքոմեդին հեռարձակվում է շաբաթական երեք անգամ և ունի համապետական ծածկույթ: Այսինքն ծրագրի շրջանակներում լույս տեսած նյութերը հասցվել են հանդիսատեսին նաև հանրապետական մակադակով: Ի հավելում դրա, հաղորդումները տեղադրվել են [youtube](#)-ի էջում և հասանելի են նաև ինտերնետային օգտատերերին:

Հաշվետվությանը կից ներկայացվում է նաև ծրագրի իրականացման ամիսների այցելությունների գրաֆիկ նկարը:

Արմքոմեդի նախանշված նպատակները այս ծրագրի շրջանակներում իրականացվել են և մենք մտադիր ենք շարունակել լուսաբանել հակակոռուպցիոն պայքարի հետագա զարգացումները: